



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 06 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0116 - 23

Ձեռնարկողը՝

«ԲՈՒԼԴՈՂԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք.Տաշիր, Փ" Ջահուկյան 10

Գործունեությունը՝

Նորք - Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց 58/15
և 58/16 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան
բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ԲՓ № 0116 - 23

< 24 > հունիսի 2023թ.

Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց 58/15 և 58/16 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ԲՈՒԼԴՈՂԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ «ԲՈՒԼԴՈՂԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց 58/15 և 58/16 հասցեներում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք: Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և փորձաքննության է ենթարկվում որպես կառուցապատում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. մայիսի 6-ի N 01/18-07/2-39154-351 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N 11022022-01-0180 և N 11022022-01-0108 վկայականներով ամրագրված՝ 0.2 և 0.2հա մակերեսներով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը կառուցապատումից ազատ ռելիեֆային թեքությամբ հողամաս է, գտնվում է երկու ներթափային ճանապարհների խաչմերուկի վրա, հարակից է Գ. Հովսեփյան փողոցին, հարևանությամբ կառուցապատումից ազատ հողամասեր են: Տարածքի մոտեցումներն ապահովված են Գ. Հովսեփյան ճանապարհից:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Ջրվեժ-Նորք հրաբխային սարավանդի սահմաններում, որոնք ունեն արևմտյան թեքություններ, մեծ և կտրուկ անկումներ դեպի Գետառ գետի հունը: Մակերեսի նիշերը տատանվում են 1134.0-1148.0 մետրերի սահմաններում: Տարածքում գրունտային ջրերը մինչև 26.0 մետր խորությամբ են բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանք տեղադրված են 50.0



մետրից խորը հորիզոններում: Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն բացակայում են:

Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայական պայմաններ:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում բնության և պատմամշակութային հուշարժաններ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն, ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 4000,0 քմ,
- կառուցապատման մակերես – 1576,3 / 39,4 %,
- անջրանցիկ մակերես – 191,7 / 4,79 %,
- կանաչապատման մակերես – 2232,0 քմ / 55,8 %,
- ստորգետնյա կառուցապատում – 3581,0 քմ / 89,5%,
- բնակարանների քանակը՝ 131 բնակարան,
- ավտոկայանատեղի՝ 148 մեքենա:

Հողամասն ունի շուրջ 13.5մ ռելիեֆի անկում հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Վերին հատվածով անցնող ներթափային ճանապարհը ունի միջինում 1149.5մ բացարձակ նիշ, որից 0.90մ վրա է ընդունված շինության պայմանական զրոյական նիշը: Զրոյական նիշից շենքը կունենա 5 հարկ բարձրություն, իսկ հողամասի ստորին հատվածում, ռելիեֆի առանձնահատկությունից ելնելով, կունենա 9 հարկ բարձրություն: Կիսանկուղային հարկերի չլուսավորվող հատվածները կծառայեն որպես ավտոկայանատեղի: Նախատեսվում է նաև մեկ նկուղային հարկ, որը ամբողջովին զբաղեցնելու է ավտոկայանատեղին: Ավտոկայանատեղիները միմյանց են կապվելու թեքահարթակներով միակողմանի շարժմամբ: Մեքենաների մուտքը կազմակերպվելու է հողամասի վերին հատվածից, իսկ ելքը՝ ստորին:

Ըստ հատակագծային լուծման՝ կառույցն ունի անհավասար թևերով H-ձև տեսք: Շենքի երկու թևերի մուտքերը կազմակերպված են ներքին բակերից և միջին անցումից: Յուրաքանչյուր մուտքում տեղադրվելու են երկուական վերելակներ և չժխեցվող աստիճանավանդակ: Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Ստորգետնյա ավտոկայանատեղին ունենալու է երկակի նշանակություն, անհրաժեշտության դեպքում ծառայելու է որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում կառուցվելու են սանհանգույցներ պատասպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքը ապահովվելու է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Շենքի էներգաարդյունավետությունը համապատասխան ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին ապահովվելու է համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում: Ջերմության խնայողության համար ընտրվելու են ջերմօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվելու են



համապատասխան միջոցառումներ (սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ) դեպի բնակելի և հասարակական տարածքներ:

Շենքում իրականացվելու է անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները քողարկվելու են հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ ապահովվելու է աղմուկի ցածր մակարդակ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը իրականացվելու է 881 Կվա հզորությամբ, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Կառուցապատողը նոր ենթակայանի կառուցման համար պարտավորվում է տրամադրել $8 \times 12 = 96$ քմ տարածք:

Գազամատակարարումը 413 խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացվելու է Ջրվեժ ԳԲԿ սնող $D=300$ մմ կողմնատար գազատարից:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Նորք-Մարաշի ջրամբարից դուրս եկող $d=500$ մմ ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել Գ.Հովսեփան փողոցով անցնող $d=1000$ մմ կոյուղատարին, հեղեղատարը Չարենցի փողոցով անցնող $d=300$ մմ հեղեղատարին:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շինարարական աշխատանքների տևողությունն է 900 օր, շինհրապարակի մակերեսը՝ 500քմ, որտեղ պահեստավորվելու և կայանվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը և տեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինություններ և այլն: Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են աշտարակային կցովի վերամբարձ կոունկ, ավտոմոբիլային կոունկ, էքսկավատոր, գլոն, բուլդոզեր, ավտոինքնաթափ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ, ապակի, փայտ, երեսպատման նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով անհրաժեշտ պարբերականությամբ:

Նախատեսվող գործունեությունն ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 9500խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ, որից 7500խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինհրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակներից կենցաղային աղբը (11,9տ) հավաքվելու է աղբահավաք կոնտեյներներում և տեղափոխվելու է մոտակա աղբավայր, իսկ 280խմ շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը հավաքվելու են մետաղյա տարողությունների մեջ և հանձնվելու են նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին: Հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով իրականացվելու են Հայտով նախատեսված միջոցառումները:

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական



- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների հստակեցում շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր տեսակների համար;
- շինարարական նյութերի (հատկապես սորուն, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով;
- մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով;
- ծայնային ազդանշանների, հակահրդեհային պաստառների, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների տեղադրում՝ վթարները կանխարգելելու համար;
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով և այլն:

Մշտադիտարկման և բնապահպանական միջոցառումների համար շինարարության ընթացքում հատկացվելու է 2,000,000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու և շահագործվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության ընթացքում լինելու են կառավարելի: Հայտով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կբացառվեն կամ կմեղմացվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, անհրաժեշտության դեպքում կնախատեսվեն հավելյալ միջոցառումներ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Նորք-Մարաշ վարչական շրջանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարումը, համապատասխան ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը, հաշվի առնել ճանապարհային ցանցի տեխնիկական իրավիճակը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:



- Ապահովել Հայտում նախատեսված գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ կառուցվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված կանաչապատման նախագծի:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93-Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 և բնակելի շենքեր Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր» ՀՀՇՆ 31-01-2014 նորմերով սահմանված պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲՈՒԼԴՈՂԵՐ» ՍՊԸ-ի կողմից Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոց 58/15 և 58/16 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան